

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ
ԻՆՔՆԱԳՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ**

Ռաբասիր. գիտ. ղեկավար Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Նարեկացու «Մատեան ողբերգութեան» Երկի գիտական վերջին հրատարակության աշխատասիրողներ Պ. Մ. Խաչատրյանը և Ա. Ա. Ղազինյանը իրենց գրած առաջաբանում ըստ ամենայնի ներկայացնում են «Մատեանի» 1774 թ. Պոլսի տպագրության հանգամանքները: Նարեկագետները այդ տպագրությունը իրավացիորեն գնահատում են իրեն ամենակատարյալ մինչ այդ եղած տպագրությունների մեջ. «Այս տպագիրը նոր մակարդակ նշանավորեց Նարեկացու երկի հին հրատարակությունների պատմության մեջ: Մատեանի հետագա տպագրությունների համար դարձավ տիպար-օրինակ»¹:

«Նարեկի» 1774 թ. հրատարակությունը իրականացվում է բաղմաթիվ մարդկանց ջանքերով, բաղմաթիվ ձեռագրերի համեմատությամբ և տևում է երկար տարիներ, որոնումներ են կատարվում բաղաթից բաղաթ, Հայաստանի զանազան վայրերում, բուն Մոկաց գավառում և գտնում են հնադուր, «անձեռնամերձ ձեռագրեր», որոնց մեջ երկուսը համարում են Նարեկացու ձեռագիրը. «...ուստի և ի բաղաթաց բաղաթաց Հայաստանեայց, և ի բուն իսկ ի Մոկաց գաւառէ մեծաշան փութով գտնալ օրինակս ընտիրս. հնագոյնս, անձեռնամերձս, յորոց զերկուցն սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր...»²: Բան առ բարեմիտ ընթերցող մատենիս» առաջաբանում, այնուհետև, հաճախ են գործածվում՝ «ըստ բուն ձեռագիր օրինակների» և նման արտահայտություններ. «փոխանակ ղենլու ըստ բուն օրինակաց», «բուն հնագոյն օրինակք», «որ ըստ հին և ըստ բուն ձեռագիր օրինակաց պարտի լինիլ», «վասնորոյ ըստ հին և ըստ բուն օրինակաց եղեալ էր միայն Գրիգորի Նարեկաց վանից վանականի, ըստ որոց և մեր եղաք այնպէս» և այլն (էջ 10, 6, 7): Այս արտահայտությունները արվում են ընդգծելու համար «ի բուն Մոկաց գավառէ», «մեծաշան փութով» ձեռք բերած «հնագոյն», «անձեռնամերձ» ձեռագիր օրինակների (այդոց զերկուցն իսկ սրբոյս պնդէին լինիլ ձեռաց գիր») հավաստությունն ու կարևորությունը: Ահա այս «բուն», «հին», «անձեռնամերձ», իսկական, գլխավոր, սկզբնական (շուրջ 30-ի հասնող) ձեռագրերի օգնությամբ է. որ 1774 թ. Պոլսում տպագրված «Նարեկը» դառնում է տիպար տպագրության և նոր մակարդակ է նշանավորում «Մատեանի» տպագրության պատմության մեջ: «Իսկ,—կարդում ենք դարձյալ նույն առաջաբանում,—տարբերութիւնք և այլայլութիւնք բառիցն և բանից թիւր միավորութեամբ, կամ սխալ բաժանմամբ նոցա, և խանգարումն կետադրութեանց և տնատութեանց՝ թէ ի տպագիրս, և թէ ի ձեռագիրս ինչ՝ մուծեալ էր զմատեանս առհասարակ, և պատեալ զամենայն բանիւք մատենիս՝ իբր զբաղեղն վնասակար՝ գեղեցիկ տընգովք, և ցամաքեալ, զպտուղ խորին իմաստից նոցա»³: Աշխատասիրողները «Նարե-

¹ Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի. Սրբան, 1985, էջ 20: «Մատեանի» գլուխները,—դարձյալ նկատում են նրանք,—բաժանված են ներքին հատվածների... հատվածների բաժանման ավանդույթը պատկանում է 1774 թ. Նարեկի հրատարակիչներին: ԺԹ դարից սկսած մինչև այսօր հետագա բոլոր հրատարակությունները պահպանել են այդ ավանդույթը: Մենք նույնպես (էջ 195):

² Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հոգևորի. Պոլիս, 1774, էջ 11—12:

³ Նույն տեղում, էջ 9:

կի» ձևագիր այդ օրինակները համեմատում են տպագրերի հետ, նշում նրանց միջև եղած գլխավոր տարբերությունները, ուղղում, շտկում են բառ ու բանի անթիվ, անհամար սխալներ՝ սկսած «Մատենանի» մուտքից, գավթից, խորագրից, մինչև վերջին դրվագները (ինչպես նկատում են նաև «Մատենանի» 1985 թ. հրատարակիչները). և 1774 թ. հրապարակի վրա են դնում «Նարեկի» գիտական, քննական բնագրի լիարժեք «ափսյար օրինակը»:

Հայտնի է, որ ամեն մի հնատիպ գիրք ձևագրի արժեք ունի 1774 թ. տպագիրը իր մեջ արտացոլում է բազում հնագույն, անձեռնամերձ ձևագրերի պատկերը, ձևագրեր, որոնցից շատերը, անշուշտ, գոյություն չունեն այսօր և հավերժացնում են միայն այդ տպագրությամբ: Այս տպագրի արժեքը առավել գնահատելի է դառնում նաև նրանով, որ ժամանակակից մատենագետներից ոմանք պնդում են, թե՛ այդ «բուն», «հին», «անձեռնամերձ» ձևագրերի մեջ երկուսը «սրբոյս իսկ լինիլ ձևաց գիր»։ Այս փաստի դեմ այլ փաստ գոյություն չունի և երե. նույնիսկ, դույզն ճշմարտություն լինի այնտեղ, դարձյալ այն գերազնահատեղի է:

Հայերեն ձևագիր և տպագիր մի շարք մատյաններում պահպանվել են նյութեր, տեղեկություններ, որոնք օգնում են հիմնավորելու 1774 թ. Պոլսում տպագրված «Նարեկի» հիմքում նարեկացու ինքնագիրը լինելու վերահիշյալ փաստը: Դրանք միաժամանակ հարստացնում են XVIII դարի նարեկացիագիտության պատմությունը, լրացնում նրա առանձին բացերը: XVIII—XIX դդ. մեզ հասած ձևագիր մի շարք ընդօրինակությունների (թուղթ կամ նամակ, «ողջունագրություն», «ծանուցում») ընձեռած փաստերը վերաբերում են «Նարեկի» սրբագրության և տպագրության 1769—1774 թթ. աշխատանքների բուն ընթացքին:

Պատմական այս թանկագին տեղեկությունները սնունդներին հանձնելու համար մենք պարտական ենք XVIII դարի մանկավարժ, Սկյուտարի Ս. Խաչ վանքի վարժապետ Մարտիրոս սարկավագին: Նա, իբրև ժամանակակից և ականատես, մեզ է ներկայացնում «Նարեկի» 1774 թ. տպագրության և նարեկացու «Մատենանի» ինքնագրի հայտնաբերման հետ կապված սեղմ և ամբողջական մի պատմություն. «Ողջունագրութիւն վասն սրբագրութեան նարեկին սրբոյ, ի սորին հարազատէ և յերջանիկ յաշակեալ տէառն Յակոբայ աստուածաբան վարդապետէ գրեալ: Եւ մեք,—շարունակում է Մարտիրոս վարժապետը,—այն սակս գրեցաք աստ, զի փայլեսցի վսեմ ոճ բան աշակերտի՝ ընդ համանրման բանի վարդապետին իւրոյ, ի զուարճութիւն հարազատ մեղաքնէից»⁴:

Նույն ձևագրում, դարձյալ Մարտիրոս վարժապետի անունից, հանդիպում ենք մի այլ գրության, այստեղ նա խոսում է Հակոբ աստվածաբանի «Ողջունագրութեան» պատճառների և շարժառիթների մասին. «Ի ճշմարտաւէր տիրացու Մարտիրոս յիսկիւտար ի սուրբ Խաչ եկեղեցւոյ սարկաւագ պատուէլի վարժապետէն ծանուցումն զպատճառէ ի վերոյգրեալ ողջունագրութեան»⁵: Այս ծանուցման մեջ պարզաբանվում են այն հարցերը, որոնք տեղ չեն գտել «Ողջունագրութեան» մեջ և որոնց լավատեղյակ էր Մարտիրոս սարկավագը՝ իբրև ժամանակակից և իրադարձությունների ականատես: Անցյալ տարի, գրում է Մարտիրոս վարժապետը, բազում անձինք բուռն ցանկություն ունեին մի նոր սրբագրութեամբ, այսինքն՝ ստույգ, կատարյալ, օրինակելի ուղղագրութեամբ լույս աշխարհ հանել սուրբ «Նարեկը»: Դրանցից մեկն էր նաև Մուրադյանց Գասպար ամիրան, որ մանկությունից խանդավառված էր «Նարեկով»: Գասպար ամիրան գրում է Կտուց անապատի վանահայր Կարապետ վարդապետին, որ վերջինս Մոկաց երկիրն ուղարկի մի «հանճարեղ» անձնավորություն՝ գիտուն, բանիբուն մի մարդ, նարեկացու ձևագիրը գրանելու, ընդօրինակելու և իրեն ուղարկելու՝ նոր տպագրության համար: Կարա-

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 5037, էջ 160ա:

⁵ Նույն տեղում, էջ 162ա:

սկսեց վարդապետն, ահա, այդ գրություն համաձայն, ուղարկում է «աստվածաբան, մեծիմաստ» Հակոբ վարդապետին, և վերջինս ամենայն ջանասիրությամբ որոնում, «հրաշխ» դառնում է «Նարեկի» ինքնագիրը, համեմատում է և արտագրությունը պատրաստի ուղարկում Գասպար ամիրային: Գասպար ամիրան 1774 թ. «Նարեկը» իր միջոցներով տպագրում է Պոլսում: «Ի հերուն հետէ կամ էր բազմաց, և ցանկային բազումը, զի սրբադրեացի Նարեկն սուրբ, յորոց մի էր և Մուրատեանց Գասպար ամիրայն, որոյ սակս գրէ առ Կոստուանապատի Կարապետ երանաշնորհ վարդապետին, զի առաջնացէ զոմն հանձնաբեկ յերկիրն Մոկաց առ ի գտանել զձեռագագիրն երանելոյն Գրիգորի Նարեկաւոյն, և անտի սրբագրեալ զՆարեկն սուրբ յղիցէ մեզ: Յորմէ առաջնացաւ տէր Յակոբ մեծիմաստ և աստուածաբան վարդապետն երանելի և որոնեալ յեզդիտ և սրբագրեալ ի նմանէ, յղեաց նոյն ամիրային, ուստի և տպագրեցաւ իսկ Նարեկն սուրբ»⁶: Մակայն մինչ այդ, կարդում ենք նույն ձեռագրում, Հակոբ աստվածաբանը վերևում հիշված իր թուղթը հղում է Կարապետ վարդապետին՝ «նկարկայացնելով ամենայն պարագան», թե ինչպես ինքը, իր պատվով ուսուցչի հանձնարարության համաձայն, մեկնեց Մոկսց աշխարհ, ինչպես գտավ «Նարեկացու հավատարիմ ինքնագիրը», ինչպես, ինչ եղանակով սրբագրեց, ընդօրինակեց այն և ուղարկեց Գասպար ամիրային: «Բայց յառաջ բան դայս,—կարդում ենք Մարտիրոս վարժապետի նույն բացատրության մեջ,—գրէ առ տէր Կարապետ վարդապետն, թէ որպէ՞ս եզդիտ և որպէ՞ս հաւատարմեցաւ նոյն լինել: Եւ նոյն Կարապետ վանահայր վարդապետը զնշին դիր ընդ սրբագրեալ Նարեկին յղեաց Գասպար ամիրային, որպէս ասացաք ՌՄԺԸ (1769) թուին մերոյ»⁷:

Նույն «Ողջունագրութիւնը»՝ «Թուղթ ի Յակոբայ առ երջանիկ տէրդ իմ և հայր Կարապետ մաքրագան վարդապետը»՝ ձեռագրերից մուտք է գործում «Մատենի» Պոլսի 1807 և 1844 թթ. տպագիրներում և արձագանք ստանում նաև նոր շրջանի ու մեր օրերի մատենագիտության մեջ (Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն», Ա. Ա. Ղազինյան, «Գրիգոր Նարեկացու Մատենան ողբերգութեան» երկի նոր հրատարակության պատրաստման առթիվ», Գրիգոր Նարեկացի, «Մատենան ողբերգութեան»՝ աշխատասիրությամբ Պ. Ա. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի (առաջաբան), Հ. Հ. Թամրազյան, «Անանիա Նարեկացի» և այլն): Պ. Ա. Խաչատրյանը, անդրադառնալով Հսկոբ վարդապետի 1807 թ. «Նարեկում» տպագրված «Թղթին»՝ «Ողջունագրութեանը» գրում է. «Արհեստական խրթնությամբ և վերամբարձ ոճով գրված նամակ է, ուղղված Կոստուց անապատի առաջնորդ Կարապետ վարդապետին: Հանդիպում է նաև ձեռագրերում (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. №ԱՊ 950, 5037, 5066): Նամակից և նրան հաջորդող գրությունից (էջ 500—01) պարզվում է, որ Կարապետ վարդապետը Հակոբին ուղարկել է Մոկաց գավառ՝ «ի գիտ բուն ձեռագրի»՝ Նարեկ մատենի սբբոյն Գրիգորի»: Հասնելով Մոկա՝ Հակոբը գտել է Նարեկի մի ձեռագիր, որը հեղինակի... ինքնագիրն է եղել: «Փորձել է» նրա հրաշապորժ ուժը՝ «բուժելով» մի ծերունու հաշմանդամ դատերը, որով համոզվել է, թե այն Նարեկացու իսկ ձեռքով է գրված... Արտագույն է և իր ընդօրինակությունն ուղարկել Կարապետ վարդապետին: Իսկ վերջինս իր հիշքին այն 1769 թ. ուղարկել է Պոլիս՝ Գասպար ամիրա Մուրատյանցին (Մատյանի 1774 թ. հրատարակության մեկենասը): Հակոբի ընդօրինակությունը, բնականաբար, օգտագործել են յոթերորդ տպագիրը պատրաստելիս⁸: Հ. Թամրազյանը ես «Անանիա Նարեկացի» աշխատության մեջ հանգամանորեն անդրադառնում է և՛ Հակոբ վարդապետի թղթին (դարձյալ 1807 թ. «Նարեկում» տպագրված) և՛ այն ծանուցմանը, որ ներկայացնում է հրատարակիչը՝ օգտվելով ձեռագրերում տարածում գտած «Զպատեմառէ ի վերագրեալ ողջունագրու-

⁶ Նույն տեղում, էջ 162—բ:

⁷ Նույն տեղում:

⁸ Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, էջ 208:

թեան» ծանուցումից՝ դարձյալ առանց հիշատակելու հեղինակի՝ Սկյուտարի Մ. Խաչ եկեղեցու վարժապետ Մարտիրոս սարկավազի անունը⁹։

Շուրջ երեք ձեռագիր էջերում պարփակված «Ցակոբէս» ծայրակապով նամակը իրոք դժվարմբունքի, բարդ, խրթին հյուսվածքով, երբեմն բառախաղ հանգավորմամբ, ինքնաստեղծ պատկերներով ու բառակապակցություններով համեմված մի յուրատիպ շարադրանք է, ուր այսուամենայնիվ բնութագրվում են և՛ ինքը՝ նարեկագետ, մատենագետ հեղինակը, նրա հոգևոր հայր Կարապետ վարդապետը, և՛ Անանիա Նարեկացին ու հատկապես Գրիգոր Նարեկացին, ինչպես նաև ներկայացվում՝ «Նարեկի» հեղինակային օրինակի հետ համեմատված բնագրի ծննդյան որոշ հանգամանքներ։ «Արդ ի նոյն խրախուսանացդ խոճապէս ներածեալ,—գրում է Հակոբ վարդապետը իր հոգևոր հորը,—և բռնադատեցեալ ի սերտակի սիրոյդ՝ ճէպ ընդ ճէպ ճախրանօք ըմբռնալոյր հարկիս՝ դժնէիս վրա աստուր տարածեալ՝ այսինքն մաքրազան անձինն արթուն հսկողին, ըռըշտեանն շափիւղային, խօսուն մարդարտին, ճգնակ մատենին, ինքնագիծ տառին, խուզեալ զհաւատին, կշռել զհանգամանսն»¹⁰։

Հակոբ վարդապետը, խրախուսված իր ուսուցչի՝ Կարապետ վարդապետի հանձնարարությամբ, խանդավառված հանճարեղ Նարեկացու ինքնագրի «հաւատին» գտնելու գաղափարով, «ճեպլնթաց» մեկնում է Մոկաց գավառը, անասելի դժվարություններ կրելով շրջում է երկրով մեկ մինչև որ հասնում է Մոկու։ Կարևոր համարեցի և ես, գրում է նա իր հոգևոր հորը, ըստ քո սիրտ կտրատող օգասլաց խոսքի, անմիջապես, ըստ իմ կարողութեան ոտքի ելնել և դժվարացանքի լեռնաբլուրների խոռոչները մտնելով, սարսափելի քարակույտներ, ձորից ձոր ահուկ խորդուրդ ճանապարհներ անցնելով, «արագ արշամամբ» հասնել Մոկու¹¹։

Հակոբ վարդապետը այցելում է «ի վանս Քաւութեանց, որ յետոյ հրածարման տեղի վարկանի»՝

Տէառն Անանիայի,
Մէծ վարժապետի,
Մաքուր սոփեստի,
Արեան ընտանի,
Սրբոյ՛ Գրիգորի,
Պուհտաբանի
Եւ ճոխ յօղողի,

որի հանձնարարությամբ և աստծու կամքով Նարեկացին շարադրել էր իր «Մատենանը»։ Այստեղ Անանիա և Գրիգոր Նարեկացիների առնչությունների հետ կապված նկատենք միայն, որ այդ հարցերին առաջին անգամ, եթե չենք սխալվում, անդադառնում է ինքը՝ Հակոբ վարդապետը։ Գուցե Անանիա Նարեկացին իր մահկանացուն կնքել է «Քաւութեանց» (Քաւանց, Կճավա Զ. Ոսկւան) վանքում և ապա իր հավիտենական հանգիստը գտել Նարեկում։ Գուցե Գրիգոր Նարեկացին իր «Մատենանի» առաջին գիրքը (օրինակը) նվիրած է եղել «արեան ընտանի» իր ուսուցչին, երբ վերջինս արդեն չկար, ինչպես նկատում է նաև Զ. Թամրազյանը։ Սրանք հարցեր են, որոնք կարող են նոր փաստերի և նոր մեկնաբանությունների։ Հակոբ վարդապետը այնուհետև այցելում է «ի վանս Տիրայնոց նշանի գահաւանդ վայրին Ապարանին», որի մասին Գրիգոր Նարեկացին գրում է «Ապարանից խաչի ներքողը և Պատմությունը», ապա որոնում և ի վերջո «հրաշիւք» գտնում «Մատենանի» «հաւատարիմ ինքնագիրը»։ Ապա Հակոբ վարդապետը նկարագրում է, թե ինքը ինչպիսի երկյուղածությամբ, սիրով ու զգուշությամբ է օրինակում «Նարեկը»․ ո՛չ թե քամհաճ միջամտությամբ, նշում է նա, համանման շարքով ինչ-որ

9 Զ. Զ. Թամրազյան. Անանիա Նարեկացի. Երևան, 1986, էջ 43—47։

10 ՄՄ, ձեռ. № 5037, էջ 160ր։

11 Նույն տեղում, էջ 160ր։

բան ավելացրի, ո՛չ թե բանաստեղծությունը ապավինելով սրբի լուսավոր խոսքը աղավաղեցի, այլ ղեկավարեցի, որ որևէ բան բաց չթողնվի, ավելորդները փակագիծ կերտելով շրջափակեցի, իսկ թերիները լուսանցքում գծով նշանակեցի (համեմատում է տպագրի հետ)։ «Սակս որոյ և մերս հաւատ ընկալեալ, որոյ ձեռնարկի ջանիւ ղըսպակի, հանգոյն գաղափարին դուռալ սրբեցի, ո՛չ թէ մտահաճ աճեցմամբ, համաքատակ շարիւ եկամուտ ինչ մուծի, և ո՛չ բերթութեան ապաստան եղեալ ղսրբոյն լուսաւոր բանս վիժեցի... այլ զաւելորդս պարապատ կերտիւք պնդեցի և ղթերիս ընդլուսացսն ծրածիդ նշանաւ արձան կառուցի»¹²։

Հակոբ աստվածաբան վարդապետի նույն «Ողջունագրութեան» մի ուրիշ ընդօրինակություն ուղագրով է ժամանակակցի մի այլ ցուցումով. այստեղ դարձյալ խոսվում է Հակոբ վարդապետի՝ Գասպար ամիրային ուղղված նամակի, «Նարեկի» ինքնագիրը նրա կողմից հայտնաբերելու, նրա առջին Հակոբ վարդապետի և Գասպար ամիրայի միմյանց հանդիպելու և այդ առթիվ խոսք բացելու մասին. «Օրինակ պատճէնի Տիգրանակերտցի սակս հաւատոյ նահատակեալ Մովսէսի արդար Յօհաննէս խստակրօն վարդապետի աշակերտի տէառն Յակոբայ վարդապետի, դրեալ աւ Մուրատեան Գասպար ամիրային, վասն նաւեկայւոյ բուն ձեռագիրսն նրա յիւր ճշգրտեալ յիւր յղելոց, զոր նրա առջին ի դիպիլ իրևարս հարցեալ էր յիւրմէ, նա որպէս յայտ է նորք ծասրողաց ղբանս»¹³։

«Ողջունագրութիւնը, և նրա առթիվ Լղած ծանուցումները ընթերցողի առջև բացում են հայ դրական մշակույթի նվիրյալների մի անժամոթ, նոր աշխարհ, որ ծնունդ է տվել նարեկացու «Մատենան ողբերգութեան» 1774 թ. տպագրությանը։

Մարտիրոս վարժապետը նկարագրում է այն խանդավառությունը, որ տիրել է իրենց միջավայրում Հակոբ վարդապետի գրությունը և սրբագրված «Նարեկը» ստանալու առթիվ. հավաքվում է նարեկագետ, նարեկասեր լուսավորական գործիչների մի խումբ։ Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյան Կոստանդնուպոլսեցին, որը հայտնի է XVIII դարում տպագրած իր բազմաթիվ գրքերով (այդ թվում նաև խորհնացու «Հայոց պատմության» հրատարակությունը) և ինքը ևս մտադիր էր մի նոր «Նարեկ» տպագրել, երբ տեսնում է «Նարեկի» նոր հեղինակային հիմքի վրա կատարված սրբագրության առթիվ գրված թուղթը՝ իր հիացմունքն է հայտնում. «Նւ տեսանելն զնոյն գիր Սարաֆեան Սարգիս եպիսկոպոսին, իսկոյն հիացմամբ ասաց. Ո՛ր, երկիր Հայոց, դեռևս գտանի՞ր արդեօք ի քեզ այսպիսի շարադրութիւն առնող»։ Բոլորը ատրիք են կանգնում և լսում նրա խոսքը. «Նւ մեք կայաք յոտին անդ և լսէաք զաստութիւն նորա...»¹⁴։

1774 թ. «Նարեկի» հրատարակության նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավված բազմաթիվ աշխատողների շրջանում առանձնանում է մեծիմաստ Հակոբ վարդապետ նարեկագետի և բնագրագետի անունը։ Նա էր, որ Մովսէս գավառում, բազմաթիվ տառապանքներ կրելով, հայտնաբերել էր նարեկացու «հաւատարիմ ինքնագիրը» և տպագրության հանձնել բնագիրը։ Կարծիքներ կան, որ մինչ այդ Հակոբ վարդապետը 16 ձեռագրերի է տպագրի հիման վրա պատրաստել էր Շարակնոցի քննական նոր բնագիրը։ Ցավալի է, որ չանցած մի քանի տարի, սուլթանական Թուրքիայի դատավճռով Հակոբ վարդապետը անասելի տանջանքների է ենթարկվում և նահատակվում. «Արդ,—գրում է Սկյուտարի Ս. Խաչ վանքի վարժապետ Մարտիրոս սարկավազը,—սոյն այս երանելի վարդապետս Յակոբ, յետ քանի մի ամաց նահատակեցաւ ի Տիգրանակերտ (այսինքն՝ ի Տիարբէգիր), վասն ի

¹² Նույն տեղում, էջ 161բ։

¹³ ՄՄ, ձեռ. № 10185, Լճ 257ա։

¹⁴ ՄՄ, ձեռ. № 5037, էջ 162բ։

Քրիստոս հաւատոցս. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիք տէր մեզ ոգորմեսցի: Ամէն»¹⁵:

Ուշագրավ է, որ 1807 թ. Պոլսում տպագրված «Նարեկը» նվիրվում է Հակոբ վարդապետի հիշատակին. «...մանաւանդ թէ՛ փոխարէն երախտեաց երանելոյն. որ առ Նարեկս սուրբ, ի յիշատակէլ նորին յնթերցողաց սորին ի տիպարձանեցուցաք»¹⁶:

«Նարեկի» 1774 թ. հիշատակարանում, ինչպես նկատեցինք, առանձնահատուկ շեշտով հիշվում է մեծ երախտավոր Գասպար ամիրա Մուրադյանի անունը. նա նյութական և բարոյական մեծագույն աջակցություն է ցուցաբերում «Մատենի» նոր, քննական բնագիրը հրատարակելու ազգանվեր գործին: «Նարեկի» ինքնագիրը հայտնաբերելու մասին Գասպար ամիրան տեղեկացնում է նաև Մխիթարյան հայրերին: Գասպար ամիրան, ինչպես նշում են «Մատենի» 1985 թ. տպագրության աշխատասիրողները, 1774 թ. «Նարեկի» նոր բնագրի ստեղծման ու տպագրության առաջին նախաձեռնողը, կազմակերպիչը, մեկնասն է:

Նարեկացիագետների այս միջավայրում առանձնահատուկ դեր է կատարում Հովհաննես Դպիրը: Ընթերցողին Հովհաննես Դպիրը ծանոթ է իբրև տպարանի տնօրեն, որի մոտ 1774 թ. տպագրվում է «Նարեկը». «Ի տպարանի Աստուածատուրի որդւոյ Յոհաննէսի Դպրի նուաստի»: Սակայն Հովհաննես Դպիրը ո՛չ միայն նշանավոր տպարանատէր է, այլ նաև 1774 թ. «Նարեկի» առաջաբանի հեղինակը կամ հեղինակներից մեկը, առաջաբան, որ ուշագրավ է բնագրագիտական, լեզվագիտական նուրբ դիտողություններով: Հրատարակիչը նաև նարեկագետ-մատենագետ է և շնորհալի բանաստեղծ: «Նարեկի» վերջում Հովհաննես Դպիրը գետնողում է իր ընդարձակ ներբողը՝ «Առ աստուածաշնորհ այրն աստծոյ ծառայ ի սուրբ Գրիգոր Նարեկացին» խորագրով, որի սկզբնատողերը հոգում են՝ «Տպագրող Աստուածատուրի որդւոյ Յոհաննէսէ ասացեալ»: Հովհաննես Դպրի 36 քառատողից բաղկացած այս ներբողը XVIII դարում և առհասարակ միջնադարում Նարեկացուն նվիրված լավագույն ներբողներից մեկն է: Հեղինակը մեծ ներշնչանքով մեկնաբանում է Նարեկացու անհատականությունը մարմնավորող աստվածային և մարդկային լավագույն հատկությունների միասնությունը: Ըստ բանաստեղծի՝ հանճարեղ Նարեկացին ձգտում է այդ հատկություններով օժտել մարդ բանականին.

Աստուածաշունչ տաւից ծովուն լուղորդ խորէջ,
Շուրջ պընտելով բզմտութեան դենչակ բնշմէջ,
Ուստի չանեալ ըզմարգարիտ լուսոյ անշէջ,
Որպէս ըղչա՛ն եկեղեցւոյ եղբր ի մէջ:

Ան՛ամեմատ ի յաջողուած շարագրութեան,
Առատարան առաջագա՛ն առ ասութեան,
Գըտակ օտոյց նըրբից յոգունց զարմիս Հայկեան,
Ի չասակի, որ էր՝ հիացք, ասաց վայրկեան...

Ողորսաղերս տաղիւք քոյովք ողբականօր.
Կարծրունացեալ սրբոյց կակղիշ տաղիշ նոքօր.
Որ ի լըսելն բնթնոնելով զայնս ըզձանօր,
Իսկոյն ըզդիւին ջուրք արտասուաց յորդ յորձանօր!¹⁷:

Հարկ և որդի հուշակավոր տպարանատերեր՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին և Հովհաննես Դպիրը մեծ երախտիք ունեն «Մատենան ողբերգու-

¹⁵ Նույն տեղում, էջ 162բ:

¹⁶ Գրիգոր Նարեկացի. Գիրք աղօթից... Կ. Պոլիս, 1807, էջ 501: Այս հրատարակության աշխատասիրողները խորապես զնահատել են Հակոբ վարդապետ նարեկագետ նահատակի վաստակը:

¹⁷ Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ..., էջ 2, 5 (գրքի վերջում):

թեան» տպագրության գործում: «Նարեկի» 1755 թ. տպագրության հիշատակարանում Հովհաննես Դպիրը հիշում է իր հոր պատվիրանը՝ «Նարեկը» ճշգրտված ուղղագրությամբ տպագրելու մասին: «Եւ զհանգուցեալ հայրն իմ, զԱստուածատուր զյոգնաշխատ ծառայն ձեր, որի կենդանութեանն պատուէր տուեալ իմումս յետնութեան՝ թէ ջանասցիր միւս անգամ տպել զսուրբ գիրքն Նարեկ՝ զգուշանալով յամենայն պարագայս նորին»¹⁸, Կատարվում է տպարանատիրոջ պատվիրանը, որդին՝ Հովհաննես Դպիրը, վերևում հիշատակված մյուս նարեկադետ գործիչների հետ միասին, 1774 թ. լույս աշխարհ է բերում «Նարեկը», հաշվի առնելով բոլոր պարագաները:

* * *

Նորագույն շրջանի մատենագրության մեջ ուշագրավ փաստեր կան նաև այն մասին, որ Նարեկացու «Մատենան ողբերգութեան» ինքնագիրը, ամենայն սրբությամբ պահպանվել է մինչև 1915 թ. և ոչնչացվել մեծ Լեյկոնի ահեղ օրերին¹⁹:

Այսպես ուրեմն. 1774 թ. Պոլսում տպագրված «Նարեկի» աշխատասիրողների այն պնդումը, թե իրենց ձեռքի տակ եղած «Նարեկի» ձեռագրերի մեջ Լեյկ է նաև Նարեկացու «Մատենան» ինքնագիրը, հաստատում են Հակոբ վարդապետի «Թուղթը» և Մարտիրոս վարժապետի «Ժանուցումները»։ Իբրև ժամանակակիցների վկայություններ, դրանք համոզում են, որ 1774 թ. «Նարեկի» տպագրության համար օգտագործված ձեռագիր օրինակների մեջ եղել է նաև Նարեկացու ինքնագիրը:

Հեղինակային օրինակի առկայությունն է առաջացրել այն անվերապահ վստահությունը, որ «Մատենանի» հետագա բազմաթիվ լավագույն հրատարա-

¹⁸ Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Դրիգորի Նարեկացւոյ՝ Հրեշտակական՝ վարդապետի. Պոլիս, 1755, էջ 573:

¹⁹ «Մատենան ողբերգութեան», 1985, էջ 177: Հովհաննես Հյուսիսյան. Համառոտակարգություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու. անտիպ ձեռագրերի ֆոնդ, ձեռ. № 92 էջ 10—11: Տե՛ս նաև՝ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Ա, Երևան, 1965, էջ 98 (0. Նդանյանի առաջաբանը): Նարեկացու «Մատենան» ինքնագրի վերաբերյալ մեղ ասած ստույգ տեղեկությունների համար մենք պարտական ենք իմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսիսյանին: Նա իր «Համառոտ նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու» անտիպ աշխատության մեջ գրում է, որ Վասպուրականի մի շարք նշանավոր վանքերում պահվող ազգային բազմաթիվ թանկարժեք հնությունների հետ պահվում էր նաև Նարեկացու «Մատենան» ինքնագիրը: Աստվածածնի վանքի ձեռագրերը, նշում է նա, —նախապես տարված էին Կոստյ անապատ, այնտեղ մնացել էին միայն 8—10 կտոր Ավետարաններ և երկու արծաթապատ Նարեկներ: «Ս. Գրիգոր Նարեկացու: Նարեկը իր իսկ ձեռամբ գրած ըլլալը, —շարունակում է նա, —հաստատված և ընդունված էր ոչ միայն շրջանի հոգևորական և աշխարհական գրագետներու կողմն, այլև՝ այցելու ուսումնասիրողներու, գիտնականներու կողմն: Նարեկն ուներ իր վավերական հիշատակարանը: Թե ինչպես բերված էր այն Նարեկա վանքն Ալյուրի վանք: Ահա այդ հիշատակարանի բովանդակությունը: Որքան կհիշեմ, Նարեկա վանքի միջոցներեն Մինաս անունով վարդապետ մը, XI դարու վերջերը գծովելով Նարեկա միաբանական ուխտեն, գողտնի իր հետ կվերցնե այդ աննման հույսի, լույսի և հավատքի գանձարանը, եկած բնակած էր Ալյուրի վանքը. այստեղ ապրած, այստեղ վախճանված և թաղված...: Այս գեղը վաճառված և թալանված էր, Այս կերպով ալ նույն հրեշտակային վարդապետի մատներով գրված Նարեկն ալ կմնար նույն վանքը, որու ականատես վկաններն մեկն ալ նա է, որ կգրե այս տողերը... Սույն անդին գանձն ալ, մեր հրեշտակային վարդապետի լուսեղեն մտքի լուսաբուլբուլ աղբյուրն ալ վանքի մէջ մնացածներու հետ կորստյան մատնվեցավ (ՄՄ, անտիպ ձեռագրերի ֆոնդ, ձեռ. № 92, էջ 11 ա—բ. «Հետ այս հաղորդման, նկատում է Ա. Ղազինյանը, —այս ձեռագիրը ևս, հազարավոր այլ ձեռագրերի հետ ոչնչացվել է մեծ եղեռնի տարիներին» Գրիգոր Նարեկացու. Մատենադարան, 1985, էջ 177):

կությունների համար հիմք է ծառայել 1774 թ. տպագրությունը: «Կ. Պոլսի տպագիրների մեջ,—նկատում է Պ. Խաչատրյանը,—անշուշտ, ամենակատարյալը 1774 թ. հրատարակությունն է, որը հիմք հանդիսացավ թե՛ Կ. Պոլսի և թե՛ այլ վայրերի հետագա հրատարակությունների հնչող մասի համար»²⁰: Հնարեկացու գրքի տպագրության պատմության մեջ նշանակալից է 1774 թ. Կոստանդնուպոլսի հրատարակությունը, որ լավագույնն է մինչև այժմ,—գրում է նաև Ա. Ղազինյանը,—...Այստեղ,—ընդգծում է նա,—նուրբ ու ճիշտ դիտողություններ են արված նաև տարբերակներ, շարահյուսական խանգարումների ու կետադրության վերաբերյալ: Իրենց մտքերը հրատարակիչները հաստատում են օրինակներով՝ բերված թե՛ ձեռագրերից և թե՛ տպագրություններից, սակայն առանց որոշակիորեն ցույց տալու իրենց աղբյուրները: Հիմք ընդունելով, անպայման, որոշ ձեռագրեր, նրանք փոփոխություններ են կատարել նաև «Մատենանի» կառուցվածքի մեջ, միաժամանակ հրաժարվելով տպագրությունների ինչ-ինչ նորամուծություններից»²¹: Նույնիսկ «Նարեկի» XIX դարի վեներտիկյան գիտական ընտիր հրատարակությունների ու մեկնությունների համար (որոնք իրականացվել են անվանի մատենագետ Ավետիսյանի ջանքերով), դարձյալ հիմք է ծառայել 1774 թ. տպագիրը. «Վենետիկ 1831 թ.—կարդում ենք Մատենանի 1935 թ. հրատարակության առաջաբանում,—նշանավոր հայագետ Գաբրիել Ավետիսյանի՝ Գրիգոր Նարեկացու Մատենանի հանգամանալից մեկնությունն է, որը լրացվելով ու վերամշակվելով հետագայում ունեցավ ևս երկու հրատարակություն (Վենետիկ, 1827, 1859): Իբրև բնագիր հեղինակն իր աշխատության հիմքում դրել է 1774 թ. տպագիրը՝ օգտվելով նաև Մխիթարյան մատենադարանի երկու գրչագրերից...»²²:

1774 թ. «Նարեկի» «հրատարակիչները ևս,—դարձյալ նկատում է Ա. Ղազինյանը,—բավարարվել են միայն հայտարարությամբ՝ առանց բանասիրական որևէ կովան բերելու: Ասենք, որ այդ հայտարարության համար, ի թիվս այլ հանգամանքների, կարող էր հիմք դառնալ նաև Գրիգոր անունով որևէ գրչի անվան շփոթությունը Նարեկացու անվան հետ»²³:

Նախ ասենք, որ XVIII դարի բնագրագետներից չի կարելի պահանջել այն մոտեցումը, որ կիրառվում է այսօր: Մյուս կողմից՝ այսպիսի թյուրիմացությունը բացառված է, քանի որ Հակոբ վարդապետի ձեռքի տակ եղած ինքնագիրը հիշատակարան չի ունեցել: Հենց այս հանգամանքն է, որ ավելի քան ուժեղացրել է նրա մեջ պատասխանատվությունը. «Բայց զի իմս պատահեալ տփոյս,—գրում է նա,—լուսաբերար եղէ վտարանդեալ, ո՛չ յաւակնի լրբեալ և ո՛չ վստահացեալ ձեռնամուխ ևղեալ, այլ կասկածմամբ մտախոհ կէի աղճատեալ սաղս շունելոյ ծիր յիշատակի...»²⁴:

1774 թ. «Նարեկի» հրատարակիչները չեն ներկայացրել ձեռագրերը, բայց 1774 թ. տպագրի օրինակով մենք տեսնում ենք, թե բնագրագիտական որքան նրբին, դժվարին և որքան օգտակար գործ են արել նրանք:

* * *

Նարեկացիագիտության պատմության մեջ XVIII դարի նշանավոր գործիչներ Մխիթար Սեբաստացու, Պաղտատար Դպրի, Հակոբ Նալյանի, Պետրոս Նախիջևանցու և այլոց շարքում պետք է իրենց արժանի տեղը գրավեն 1774 թ. Պոլսում հրատարակված «Նարեկի» շուրջը համախմբված, երկի վեցամյա նախապատրաստական աշխատանքներին իրենց ծառայությունները մատուցած

20 Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան. 1935, էջ 10:

21 Ա. Ղազինյան. նշվ. աշխ., էջ 210:

22 Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան. 1935, էջ 207:

23 Նույն տեղում, էջ 176—177:

24 ՄՄ, ձեռ. N° 10185, էջ 257բ:

գործիչներ, վաճառական Գասպար ամիրա Մուրադյանցի, Կտուց անապատի վանահայր Կարապետ Մոկացի վարդապետի, Հակոբ նահատակ Տաթևանակերտցու, տպարտնատեր րանաստեղծ Հովհաննես Իսկուրի. Սկյուտարի Ս. Խաչվանքի վարժապետ Մարտիրոս սարկավազի անունները, Նրանց շանթերով է, որ ծնունդ է առնում Նարեկացու բուն ձեռագրի հետ «հրաշիւք ճշողաեալ» «Նարեկ» գիրքը՝ «Մատենան ողբերգութեան» «առաջին տիպար» տպաւորութիւնը:

Ցավոք, «Մատենան ողբերգութեան» 1985 թ. գիտական հրատարակութեան աշխատասիրողները «Նարեկի» հնաաիպերը, այդ թվում նաև «նոր մանարդակ նշանավորած» 1774 թ. տպագիրը, գուրս են թողել համեմատական բնագրից՝ ռավարարվել ծանոթագրումներով:

Աշխատասիրողների այն պատճառաբանությունը, թե տպագրերի տարբերությունները «ոգալի չափով ապագրական վրիպակներ կարող էին լինել» (էջ 12), թե տպագիրները «բուն գրչագրերից անմիջականորեն ծագող ապագրները հիմնականում ո՛չ թե բնագրային նոր տարբերություններ են և ճաշարեում, այլ գլխավորապես, տպագրական վրիպակներ» (էջ 224) և այլն, անհասկանալի են: Մի՞թե հնատիպ նարեկներից ամենակատարյալի՝ 1774 թ. բնագրի համար բնորոշը վրիպակների առատությունն է: Եվ կամ մի՞թե վրիպակները հիմնականում չեն աարբերվում էական նշանակություն ունեցող սխալներից, տարրնթերցվածներից:

Այսպես, Ձեռագրական հին և նոր փաստերի հիման վրա հայտնի է դառնում, որ պահպանվել են Նարեկացու «Մաաեանի» երկու ինքնագրեր. առաջինը՝ առանց հրատարակարանի՝ հնուց ի վեր պահպանված անխախտ ավանդության հիման վրա է ճանաչվել իրեն ինքնագիր և արտահայտվել 1774 թ. Պոլսի տպագրության մեջ (տե՛ս Հակոբ վարդապետի «Թուղթը», Մարտիրոս վարժապետի «Մանուցումները», «Մատենանի» 1774 թ. Պոլսի տպագրության առաջարկը), իսկ երկրորդը, որը պահպանվել է մինչև մեծ եղեռնի օրերը, ունեցել է հիշատակարան, որը ներկայացնում է մեզ ականատես Հովհ. վարդապետ Հյուսյանը՝ իր «Համառոտ նկարագրություն» մեջ:

Տարակուսանքից վեր է, որ «Մատենան ողբերգութեան» գիտական հանրոգ հրատարակության հիմքում կդրվի նաև 1774 թ. «Կիրք» աղօթից սրբոյն Գրեգորի Նորեկացու» հրատարակության բնագիրը: Դա կլինի յուրովի հավերժացումն հանճարեղ Նարեկացու ինքնագիր ձեռագրի, ինչպես նաև երեք տասնյակի հասնող «հնագույն», «հավատարիմ», «անձեռնամերձ» գրչագրերի և՛ երախտագիտության աուրք այն գործիչների հիշատակին, որոնք «անսպառ չանիւք» և «հրաշիւք» հայ սերունդներին են հունձնել այդ անմեռ կոթողը:

К ВОПРОСУ ОБ ОРИГИНАЛЕ РУКОПИСИ «КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

Доктор филол. наук Ш. Դ. НАЗАРЯН

Резюме

Согласно памятным записям, константинопольское издание 1774 г. «Книги скорбных песнопений» Григора Нарекаци осуществлялось благодаря усилиям многочисленных исследователей, в течение долгих лет проводивших изыскания в различных городах Армении, сопоставляя и сравнивая различные рукописи. В уезде Могац были обнаружены два фоллианта, принадлежавших перу поэта. В ряде армянских рукописных и печатных книг содержится материал, свидетельствующий в пользу предположения о том, что в основе вышеуказанного издания 1774 г. лежит оригинал рукописи Григора Нарекаци. Об этом же повествует краткий рассказ Мартироса Саркавага (XVIII в.), который рассказывает об обнаружении рукописного оригинала поэта и об издании 1774 г. как современник и очевидец.